# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հոկտեմբերի 2019 թվականի N 660-Ա

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Եվգենյա Սանասարի Թորոսյանին և Ջվան Իհսանի Աբդուլլահին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ 2-րդ այգեգործական զանգվածի 2-րդ թաղամասի թիվ 3 հասցեի այգեգործական հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ գոյություն ունեցող այգետնակի վերակառուցման և կից՝ երկհարկանի այգետնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Եվգենյա Սանասարի Թորոսյանին և Ջվան Իհսանի Աբդուլլահին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 11
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հոկտեմբերի 2019 թվականի N 661-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արման Արսենի Նարգիզյանին տալ 30,0 քառ.մետր մակերեսով տնտեսական շինության կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0347-0027 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողամասում:

2.Պարտավորեցնել Արման Արսենի Նարգիզյանյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արման Արսենի Նարգիզյանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 11

գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հոկտեմբերի 2019 թվականի N 662-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Գագիկ Խաչիկի Մուրադյանին տալ 30,0 քառ.մետր մակերեսով տնտեսական շինության կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0336-0008 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողամասում:

2.Պարտավորեցնել Գագիկ Խաչիկի Մուրադյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գագիկ Խաչիկի Մուրադյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 11
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հոկտեմբերի 2019 թվականի N 663-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Սամվել Բալասանի Վիրաբյանին տալ երկհարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 3-րդ փողոցի թիվ 15 հասցեի հողամասում:

2.Պարտավորեցնել Սամվել Բալասանի Վիրաբյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սամվել Բալասանի Վիրաբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
МУНИЦИПАЛИТЕТ ДЖРВЕЖ КОТАЙКСКАЯ ОБЛАСТЬ РА
JRVEZH MUNICIPALITY KOTAYK REGION RA
ՀՎՀՀ 03546091

2019 թ. հոկտեմբերի 11
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2019 թվականի N 664-Ա

## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ԱՅԳԵՏԱՐԱԾՔԻ 10-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան է դիմել Ալբերտ Քերոբի Ալբերտյանը (ծնված՝ 1949 թվականի դեկտեմբերի 16-ին) սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր Այգետարածքի 10-րդ թաղամասի թիվ 2/1 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրի հասարակական կառուցապատման հողերից փոխելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի և հողամասում կառուցված թիվ 1 սպասարկման օբյեկտի գործառական նշանակությունը բնակելի տան սահմանելու խնդրանքով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23082016-07-0015, տրված 2016 թվականի օգոստոսի 23-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի պահանջով և հիմք ընդունելով Ձորաղբյուր համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 2-ի թիվ 19-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Ալբերտ Քերոբի Ալբերտյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր Այգետարածքի 10-րդ թաղամասի թիվ 2/1 հասցեում գտնվող 52,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Ալբերտ Քերոբի Ալբերտյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր Այգետարածք 10-րդ թաղամաս թիվ 2/1 հասցեում գտնվող 119,8 քառ.մետր մակերեսով թիվ 1 սպասարկման օբյեկտի գործառական նշանակությունը, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների սահմանել որպես բնակելի տուն:

3.Պարտավորեցնել Ալբերտ Քերոբի Ալբերտյանին՝ որոշումից բխող իրավունքները գրանցել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

4.Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված հողի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 11
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2019 թվականի N 665-Ա

## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 68-Ն որոշման 2-րդ կետը, ***որոշում եմ.***

1.Ջրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում և 01.1.1 խումբ ենթախմբի 4251 հոդվածը պակասեցնել 800,0 հազար դրամով, 01.6.1 խումբ ենթախմբի 4241 հոդվածն ավելացնել 800,0 հազար դրամով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 11
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» հոկտեմբերի 2019 թվականի N 666-Ա

## ԻՍԿՈՒՀԻ ՍԵՐԺԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 26 տան բնակիչ Իսկուհի Սերժիկի Խաչատրյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը ներկայումս բաղկացած է 6 անձից, ինքը և ամուսինը՝ Ռազմիկ Հակոբի Հակոբյանը ներկայումս չեն աշխատում, 2-րդ կարգի հաշմանդամության թոշակառուներ են, ունեն առողջական խնդիրներ, գտնվում են երկարատև բուժման մեջ, Իսկուհի Խաչատրյանը վերջերս տարել է ողնաշարի վիրահատություն և քիմիոթերապիայի անհրաժեշտություն կա, որդին՝ Գուրգեն Հակոբյանը և հարսը՝ Լիլիթ Համբարյանը նույնպես չեն աշխատում, նրանց խնամքի տակ են երկու անչափահաս երեխաները՝ Արմինե և Ռազմիկ Հակոբյանները, ծնված 2012 և 2014 թվականներին և ընտանիքի ֆինանսական և սոցիալական վիճակից ելնելով Իսկուհի Խաչատրյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Իսկուհի Սերժիկի Խաչատրյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Իսկուհի Սերժիկի Խաչատրյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» հոկտեմբերի 2019 թվականի N 667-Ա

## ՄԱՆԻԿ ՎԱԼԻԿՈՅԻ ԲԵՐԱԿՉՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ փողոցի թիվ 58 տան բնակիչ Մանիկ Վալիկոյի Բերակչյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը ներկայումս բաղկացած է 2 անձից, Ինքը և ամուսինը՝ Հենրիկ Աբգարի Լսկավյանը ներկայումս չեն աշխատում, ընդ որում՝ ամուսինը 3-րդ կարգի հաշմանդամության թոշակառու է, ունի առողջական խնդիրներ, գտնվում է երկարատև բուժման մեջ, որդին՝ Աբգար Լսկավյանը, ծնված 1999 թվականին, գտնվում է ժամկետային զինծառայության մեջ, և ընտանիքի ֆինանսական և սոցիալական վիճակից ելնելով Մանիկ Վալիկոյի Բերակչյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Մանիկ Վալիկոյի Բերակչյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մանիկ Վալիկոյի Բերակչյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» հոկտեմբերի 2019 թվականի N 668-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Արգամ Ալբերտի Մկրտչյանը սեփականության իրավունքով ընտանիքին պատկանող Ջրվեժ համայնքի Զորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 73 հասցեի տնամերձ հողամասում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է շինարարական աշխատանքներ և կառուցել բնակելի տուն, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արգամ Ալբերտի Մկրտչյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Արգամ Ալբերտի Մկրտչյանին՝ օրենքով սահմանված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3.Պարտավորեցնել Արգամ Ալբերտի Մկրտչյանին, օրինականցնել ինքնակամ կառուցված շինությունները:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արգամ Ալբերտի Մկրտչյանին որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» հոկտեմբերի 2019 թվականի N 669-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Սարգիս Գուրգենի Գալոյանին տալ հենապատի և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0323-0049 և 07-057-324-0002 կադաստրային համարների գյուղատնտեսական նշանակության հողամասերում:

2.Պարտավորեցնել Սարգիս Գուրգենի Գալոյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սարգիս Գուրգենի Գալոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» հոկտեմբերի 2019 թվականի N 670-Ա

ԱՄԱԼԻԱ ԱՐՇԱԿԻ ՍԱՐԳԻՍՈՎԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Այգեգործական 3-րդ թաղամասի թիվ 14 տան բնակիչ Ամալիա Արշակի Սարգիսովայի վերաբերյալ, այն է՝ Ամալիա Արշակի Սարգիսովան կենսաթոշակառու է, ունի առողջական խնդիրներ, ներկայումս ընտանիքի մեկ անձով բնակվում է կիսակառույց տան մեջ, որը բարվոք վիճակում չէ և ձմեռվա վառելիքի հոգսը հոգալու և իր սոցիալական վիճակից ելնելով դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Ամալիա Արշակի Սարգիսովային ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ամալիա Արշակի Սարգիսովային որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * RA KOTAYK REGION JRVEZH MUNICIPALITY * КОТАЙКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ДЖРВЕЖ * 03546091

2019 թ. հոկտեմբերի 15
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«15» հոկտեմբերի 2019 թվականի N 671-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ և 48-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 9-րդ փողոցի թիվ 12 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորին կից, համայնքային սեփականություն հանդիսացող 379,1 քառ.մ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 9-րդ փողոց, թիվ 12/1:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 9-րդ փողոցի թիվ 12/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2019 թվականի N 672-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Նարինե Պայքարի Խուրշուդյանի (ծնված՝ 1950 թվականի դեկտեմբերի 25-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի թիվ 11 տեղամասի թիվ 23 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Աբովյանի տարածքային ներկայացուցչության կողմից 2019 թվականի մայիսի 31-ին տրված թիվ Աբ-899 արխիվային տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2019 թվականի սեպտեմբերի 20-ին, անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Հարությունյանի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 30-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Հարությունյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի և տեղեկանքի պարզվել է, որ Նարինե Պայքարի Խուրշուդյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի թիվ 11 տեղամասի թիվ 23 հասցեի հողամասում 1992 թվականին ինքնակամ կառուցվել են՝ կիսանկուղ 30,08 քառ.մետր, 1-ին հարկ՝ 35,33 քառ. մետր, ծածկ՝ 8,53 քառ.մետր, աստիճան՝ 1,49 քառ.մետր, մանսարդ՝ 21,81 քառ. մետր և բ/պ՝ ընդհանուր 37,57 քառ.մետր արտաքին մակերեսներով (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացի Նարինե Պայքարի Խուրշուդյանի դիմումում նշված և անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Հարությունյանի կողմից ներկայացված տեղեկանքի մեջ նշված տարեթվերը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Նարինե Պայքարի Խուրշուդյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի թիվ 11 տեղամասի թիվ 23 հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շենք-շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Նարինե Պայքարի Խուրշուդյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի թիվ 11 տեղամասի թիվ 23 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված կիսանկուղը 30,08 քառ.մետր, 1-ին հարկը՝ 35,33 քառ. մետր, ծածկը՝ 8,53 քառ.մետր, աստիճանը՝ 1,49 քառ.մետր, մանսարդը՝ 21,81 քառ. մետր և բ/պ-ը՝ ընդհանուր 37,57 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարինե Պայքարի Խուրշուդյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2019 թվականի N 673-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով և N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33, 34-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Արման Հովիկի Թամազյանի կողմից (ծնված 1980 թվականի սեպտեմբերի 22-ին) Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 2/47 հասցեում գտնվող հողամասի հարևանությամբ, համայնքային սեփականություն հանդիսացող 20,16 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ կառուցված 18,6 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 2/47 հասցեի հողակտորի հարևանությամբ գտնվող 20,16 քառ.մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 14-րդ փողոց, թիվ 2/48:

2.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 2/48 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 20,16 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ կառուցված 18,6 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակը համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության իրավունքը (կցվում են հողամասի և շինության հատակագծերը):

3.Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 2/48 հասցեում գտնվող գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցը ձեռք բերելու նպատակով գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած անձ՝ Արմնն Հովիկի Թամազյանին:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«16» հոկտեմբերի 2019 թվականի N 674-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Գարեգին Ռոբերտի Սարգսյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի 7-րդ թաղամասի թիվ 19 հասցեի հողակտորում 2017 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 14 շինարարության թույլտվությամբ տրված երեք հարկանի բնակելի տան կառուցման և տարածքի պարսպապատման շինարարական աշխատանքները, համաձայն հաստատված նախագծի և թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 16
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«16» հոկտեմբերի 2019 թվականի N 675-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արթուր Սարգսի Ոսկանյանին տալ տնտեսական հարկով ավտոտնակի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի թիվ 1/73 հասցեի հողամասում:

2.Պարտավորեցնել Արթուր Սարգսի Ոսկանյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արթուր Սարգսի Ոսկանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 16
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«16» հոկտեմբերի 2019 թվականի N 676-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Եվգենյա Սանասարի Թորոսյանին և Ջվան Իիսանի Աբդուլլահին տալ գոյություն ունեցող այգետնակի վերակառուցման և կից երկհարկանի այգետնակի կառուցման շինարարության թույլտվություն՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ այգեգործական զանգվածի 2-րդ թաղամասի թիվ 3 հասցեի հողամասում:

2.Պարտավորեցնել Եվգենյա Սանասարի Թորոսյանին և Ջվան Իիսանի Աբդուլլահին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Եվգենյա Սանասարի Թորոսյանին և Ջվան Իիսանի Աբդուլլահին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 16
գ. Ջրվեժ